  

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԿՈԼԵԳԻԱ**

# ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2014 թվականի **թիվ 76** քաղ. Մոսկվա

**Այն արտադրանքի ցանկը հաստատելու մասին, որի նկատմամբ մաքսային հայտարարագիր ներկայացնելն ուղեկցվում է «Մրգերից եւ բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթը ներկայացնելով**

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3–րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել այն արտադրանքի ցանկը, որի նկատմամբ մաքսային հայտարարագիր ներկայացնելն ուղեկցվում է «Մրգերից եւ բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթը ներկայացնելով:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի**

**կոլեգիայի նախագահ՝** **Վ. Խրիստենկո**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի կոլեգիայի

2014 թվականի մայիսի 26-ի

թիվ 76 որոշմամբ

**ՑԱՆԿ**

**այն արտադրանքի, որի նկատմամբ մաքսային հայտարարագիր ներկայացնելն ուղեկցվում է «Մրգերից եւ բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթը ներկայացնելով**

| **Արտադրանքի անվանումը** | **Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ** | **Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ** | **Ծանոթագրություն** |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Հյութեր մրգերից եւ (կամ) բանջարեղենից (բացի տոմատի | 2009-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | հատուկ նշանակության սննդամթերքի շարքին դասվող հյութերի համար |

| Արտադրանքի անվանումը | Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ | Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| հյութից), այդ թվում՝<br>ուղղակի մզման հյութ<br>վերականգնված հյութ<br>խտացրած հյութ<br>դիֆուզային (ջրով լուծահանված) հյութ | | | բավարար պայման է հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում<br>նոր տեսակի հյութերի համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Մրգային եւ (կամ) բանջարեղենային նեկտարներ | 2202 90 100 9-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | հատուկ նշանակության սննդամթերքի շարքին դասվող մրգային եւ (կամ) բանջարեղենային նեկտարների համար բավարար պայման է հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ |

| Արտադրանքի անվանումը | Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ | Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում<br><br>նոր տեսակի մրգային եւ (կամ) բանջարեղենային նեկտարների համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Մրգային եւ (կամ) բանջարեղենային հյութ պարունակող ըմպելիքներ | 2202 90 100 9-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | հատուկ նշանակության սննդամթերքի շարքին դասվող մրգային եւ (կամ) բանջարեղենային հյութ պարունակող ըմպելիքների համար բավարար պայման է հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի |

| Արտադրանքի անվանումը | Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ | Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | պահանջվում<br>նոր տեսակի մրգային եւ (կամ) բանջարեղենային հյութ պարունակող ըմպելիքների համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Օշարակներ | 2202 90 100 9-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | հատուկ նշանակության սննդամթերքի շարքին դասվող օշարակների համար բավարար պայման է հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում<br>նոր տեսակի օշարակների համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում |

| Արտադրանքի անվանումը | Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ | Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Խտացրած օշարակներ | 2202 90 100 9-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | նոր տեսակի խտացրած օշարակների համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Մրգային եւ (կամ) բանջարեղենային խյուսեր (բացի տոմատի խյուսից), խտացրած մրգային եւ (կամ) բանջարեղենային խյուսեր (բացի տոմատի խյուսից) | 2004 90-ից<br>2005-ից<br>2007-ից<br>2008-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | նոր տեսակի մրգային եւ (կամ) բանջարեղենային խյուսերի (բացի տոմատի խյուսից), խտացրած մրգային եւ (կամ) բանջարեղենային խյուսերի համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության |

| Արտադրանքի անվանումը | Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ | Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Տոմատի հյութեր, տոմատի խյուսեր, խտացրած տոմատի խյուսեր (մածուկներ) | 2002 90<br>2009 50 | համապատասխանության մասին հայտարարագիր | հատուկ նշանակության սննդամթերքի շարքին դասվող տոմատի հյութերի համար բավարար պայման է հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում<br><br>նոր տեսակի տոմատի հյութերի, տոմատի խյուսերի, խտացրած խյուսերի (մածուկների) համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |

| Արտադրանքի անվանումը | Ծածկագիրը ՄՄ ԱՏԳ ԱԱ | Համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթ | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Խտացրած բնական բուրաստեղծ մրգային կամ բանջարեղենային նյութեր | 2106 90 200 0-ից<br>2106 90 980 9-ից<br>3302 10 100 0-ից<br>3302 10 210 0-ից<br>3302 10 400 0-ից<br>3302 90-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | նոր տեսակի խտացրած բնական մրգային կամ բանջարեղենային բուրաստեղծ նյութերի համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |
| Ցիտրուսային մրգերի բջիջներ, մրգային եւ (կամ) բանջարեղենային պտղամսեր | 2002-ից<br>2004-ից<br>2005-ից<br>2008-ից | համապատասխանության մասին հայտարարագիր | նոր տեսակի ցիտրուսային մրգերի բջիջների, մրգային եւ (կամ) բանջարեղենային պտղամսերի համար բավարար պայման է նոր տեսակի սննդամթերքի միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների առկայությունը եւ համապատասխանության հայտարարագիրը ներկայացնել չի պահանջվում |

Ծանոթագրություններ. 1. Սույն ցանկը կիրառելու նպատակով՝ անհրաժեշտ է օգտագործել ինչպես արտադրանքի անվանումը, այնպես էլ ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը:

2. «Մրգերից եւ բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթուղթը մաքսային մարմիններ ներկայացնելու պահանջը կիրառվում է (հաշվի առնելով սույն ցանկի 4-րդ վանդակում ներկայացված ծանոթագրությունները) Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող մրգերից եւ (կամ) բանջարեղենից ստացված հյութամթերքի նկատմամբ եւ չի կիրառվում մրգերից եւ (կամ) բանջարեղենից ստացված այն հյութամթերքի նկատմամբ, որն արտադրվում է քաղաքացիների կողմից տնային պայմաններում, անձնական օժանդակ տնտեսություններում կամ արտադրվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ զբաղվող քաղաքացիների կողմից: